

ՆԱԽԸՆԹԱՅ ԱՆԴԱՄԻ ԾԱՎԱԼՄԱՆ ԻՄԱՍՏԱՑԻՆ-ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Ռեճաթի. գիտ. դոկտոր Բ. Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հետադոտությունը պարզում է, որ լիանշանակ բառախմբերի (նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի) զուտ համակարգային քննությունը իրարժեք կերպով չի բացահայտում նրանց իրական գործառնությունները: Սրանք իրենց ինչպես իմաստային, այնպես էլ ոճական յուրահատկությունները դրսևորում են համակարգից դուրս, տեքստային այն իրադրություններում ու կառույցներում, որոնցում գործառնում են: Այս նկատառումներից ելնելով՝ կանգ առնենք նախընթաց անդամի¹ տարբեր խոսքի մասերի պատկանող տեքստային փոխարինումների իմաստային-ոճական արժեքների վրա:

Այդպիսի մոտեցմամբ նախ քննության ենթարկենք դերանվանական հետևյալ փոխարինումները: Որպես օրինակ վերցնենք տեքստային հետևյալ ամբողջական հատվածը:

1. Տղան, սրտում հաղար զգացմունք ու ցանկություն, մոտենում է աղջկան, և լուսինը թաքնվում է ափի տակ...

2. Կում է այդ մասին աղքատ հայրը, որը հարստություն է ունենում, ժեռ նախիրներ ու արտեր և զայրանում է (բացթողում՝ նա):

3. — Ես չեմ տա իմ աղջկան նրան, — ասում է նա, — իմ աղջիկը կին չի գտնա մշակին...

4. Իսկ աղջիկը, մարգարիտ արտասուքներն աչքերին, մոտենում է հորն ու հայտնում իր սերն առ հնձվորը:

5. — Սպանիր ինձ, հայր, — ասում է նա, — սպանիր ինձ քո հայրական ձեռքերով կամ տուր (բացթողում՝ դու, ինձ) հնձվոր տղին: Էլ ինչու ապրեմ ես, եթե նրանք չեմ լինելու (բացթողում՝ ես):

6. Դու սիրում ես քո աղջկան, հայր, և անկարելի է, որ (բացթողում՝ դու) չիմանաս, թե ինչ բան է սերը (ՀՔԶ):

Հարաբերականորեն վեց ինքնուրույն ասույթներից² բաղկացած տեքստային այս հատվածը կարելի է դիտել մեկ գերասույթ³, որի իմաստային միջուկը կազմում է հինգերորդ ասույթի մի մասը կազմող «էլ ինչու ապրեմ ես, եթե նրանք չեմ լինելու» շարահյուսական կառույցը, որտեղ ընդգծված նրանք դերանվանական փոխարինումն ունի իմաստային ու արտահայտչական առանցքային նշանակություն: Այս փոխարինման իրական նշանակությունն ու ոճական արժեքը, որ սերտորեն կապված են միմյանց հետ, չեն ահմանափակվում միայն տվյալ կառույցով: Սակայն բուն արժեքներն ի հայտ են գալիս, երբ նկատի են առնվում նաև տեքստի մյուս կարևոր իրադարձությունները, որոնց ծանոթանալուց հետո է միայն պարզվում, որ նախընթաց անդամի տվյալ փոխարինումն իր մեջ պարունակում է հակադիր բովանդակություններ: Եթե նրանք բաղադրիչը (իր նախընթաց անդամով հանդերձ) գիտում ենք մեծահարուստ հոր տեսանկյունով, ապա գործ

¹ Փոխարինվող կամ կրկնվող անդամը նախընթաց է:

² Ասույթ. — Տեքստի նվազագույն միավոր: Իրականության որոշակի երևույթների անվանումների սահմանափակ թվով փոխադարձ հարաբերություն, որն օժտված է նվազաիմաստային հարաբերական ինքնուրույնությամբ:

³ Գերասույթ. — Տեքստային միավոր: Ասույթի ծավալային տարբերակներից է, որը տեքստում սահմանադատվում է իմաստային շահանքներով:

ենք ունենում հասարակական մի ոչ լիիրավ խավի ներկայացուցչի հետ, որը հանդգնել է սիրել ազնվագարմ օրիորդի: Մինչդեռ աղջիկը, ընդհակառակը, ոտնահարում է ժամանակի սոցիալական անարդարությունները, օժտվում գեղեցիկի ընկալման ներշնչանքով ու համակում երիտասարդ հնձվորին սիրո հրապուրիչ զգացումով: Հուզական ու զգացական երանգներով հագեցված այդպիսի վեհ իմաստ ու նվիրում է տեսնում աղջիկը նրան բաղադրիչով փոխարինված նախընթաց անդամի մեջ, առանց որի իր կյանքն իրոք անիմաստ է: Դա հաստատվում է տեքստ-պատմվածքի հետագա հատվածներում, ուր երիտասարդ զույգը, արհամարհելով քարացած բարքերը, կյանքի գնով խիզախում է դրանց դեմ: Այսպես, պատմվածքի հիմնական իրադարձությունների համադրմամբ է միայն բացահայտվում նախընթաց անդամի բերանավանական նշված փոխարինման բուն իրադրական նշանակությունն ու նրանում ներածված ոճական-հուզաարտահայտչական որոշակի արժեքը:

Դրանով չեն սպառվում բերված հատվածում տեղ գտած դերանվանական փոխարինումների ոճական դրսևորումները:

Կանգ առնենք նույն հատվածում տեղ գտած հինգերորդ ասուլթի առաջին մասի իմաստային-ոճական նախ ընդհանուր արժեքի վրա: «Սպանիր ինձ, հայր, սպանիր ինձ քո հայրական ձեռքերով կամ տուր (զեղչում՝ դու, ինձ) հնձվոր տղին»:

Նախընթաց անդամի կրկնության, փոխարինման, վերականգնման միջոցով, զգացական ու հուզական պոռթկումով արտաբերված շարահյուսական այս կառույցը որքան կտրուկ, վճռական ու ճշմարտացի է հնչում, քանի որ աղջկա անբիծ զգացումներն ազատագրել են նրա՝ իրականության կաշկանդող կապանքներից, նպատակասլաց կերպով գիտակցության բերել, որ ինքն իրավունք ունի անձամբ տնօրինելու իր սեփական ճակատագիրը:

Ահավասիկ այն սեղմ ու պարզ բովանդակությունը, որ խտացվել է հուզականությամբ ու ճշգրտությամբ աչքի ընկնող շարահյուսական տրվյալ կառույցում: Դերանվանական փոխարինումներով հարուստ տեքստային վերլուծվող հատվածում առկա են նաև իմաստային-ոճական այլ միջոցներ, ասենք՝ զեղչում, հակադրություն, ավելադրություն, չափազանցություն, փոխկերպարություն և այլն:

Հակադրությունը, որպես ոճական-արտահայտչական միջոց, նույնպես կարող է հանդես գալ ոչ միայն իրար կողքի դրված և հակադիր իմաստ արտահայտող բառերով ու արտահայտություններով, այլև ընդհանուր իմաստով իրար հակադրվող ասուլթներով կամ ասուլթների խմբով: Օրինակ, ընկնողական ենթակա գերասուլթի երրորդ ասուլթի՝ «—Ծս չեմ տա իմ աղջկան նրան, իմ աղջիկը կին չի դառնա մշակին...», արտահայտած ընդհանուր իմաստին իր ընդհանրական իմաստով հակադրվում է չորրորդ ասուլթը՝ «Իսկ աղջիկը, մարգարիտ արտասուքներն աչքերին, մոտենում է հորն ու հայտնում իր սերն առ հնձվորը»: Նույն հակադրությունը շարունակվում է նաև հինգերորդ ու վեցերորդ ասուլթների միջոցով՝ նկատելիորեն ուժեղացնելով հակադրվող իմաստի ավելի խոր ընկալումը: Հուզաարտահայտչական ազդու միջոցներից զերծ չէ նաև դերանվանական փոխարինումներով աչքի ընկնող հինգերորդ ասուլթը, որտեղ առկա են ինչպես ավելադրությունն ու զեղչումը, այնպես էլ կրկնությունն ու իմաստի սաստկադրումը: Քո հայրական ձեռքերով արտահայտությունն այստեղ ավելադրություն է, որը տեքստային տվյալ միջավայրում նպաստում է արժարժված մաքի ուժեղացմանը, իսկ քո դերանվանական տարրն այս կառույցում ընդգծում է ոչ այնքան գիմալին յուրահատկություն, որքան իմաստի նրբին սաստկացում: Դու, ինձ դերանունների զեղչումը բերված ասուլթում ծառայում է իմաստի սեղմ արտահայտման շահերին: Սպանիր ինձ կապակցության կրկնությունը նույն հատվածում առաջացնում է իմաստի կոտրակում, որի հետևանքով ավելի է շեշտվում տվյալ իրադրության արտահայտչական-

թյունը և բաղմապատկվում նրա հուզական-զգացական երանգը: Գերասուլթի առաջին ասուլթը, որտեղ հանդես են եկել աղա և աղջիկ նախընթաց անդամները, իր մեջ պարունակում է առաջին նախընթաց անդամին որոշակիառնող այնպիսի տարրեր (դետերմինանտներ)՝ «սրտում հազար զգացմունք ու ցանկություն», որոնք առավել շափազանցումով են ներկայացնում տղայի զգացմունքն ու ցանկությունը: Սակայն այդ նպատակային շափազանցումը հիմնավոր է, քանի որ, ինչպես ցույց են տալիս տեքստ-պատմըվածքի հետագա իրադարձությունները, տղայի զգացումներն այնքան խորն են ու անդամաճան, որ նա ասիերջանիկ կյանքից նախընտրում է մահը:

Նախընթաց անդամի դերանվանական փոխարինման ոճական կիրառությունը, ինչպես տեսնում ենք, բավական բազմազան բնույթ ունի: Դրանց, իհարկե, կարող են ավելացվել և այլ ընկալումներ, ասենք՝ մտերմական երանդ, որն ավելի հուղական է դարձնում խոսքային իրադրությունը:

Որինակ.

Այժմ դու (Վիլյամ Սարոյանը) կնշնա կոմիտասի կողքին, և նրա երգող ոգին էնզ հետ կլինի հավիտյան հավիտենից (ՎԴՍ), որտեղ ընդգծված դու, էնզ դերանվանական փոխարինումներ տեքստային նման պայմաններում արտահայտում են մտերմիկ ու հուղական երանգ:

Կամ՝ որևէ դեմքի անձնական դերանուն շեշտելու նպատակով հաճախ կողքի կողքի հանդես են գալիս նախընթաց անդամը և նրան փոխարինող դերանուններ: Այսպես.

— Բայց չէ որ դու, Վիլյամ Սարոյանը, աշխարհի ամենաբարձր գոգող, ռեբր կյանքի մոմանակը պիեսի մեջ հենց վրձնով պատմեցիր շար ոստիկան Բլիկին, սպանելով պատմեցի... (ՎԴՍ):

Այստեղ երկրորդ դեմքի դու գերանուն-փոխարինմանն անմիջապես հաջորդել են Վիլյամ Սարոյանը, աշխարհի ամենաբարձր գոգող և՛ շեշտող, և՛ մեկնաբանող ու հուզմունքով լի տարրերը: Ըստ որում դիմայնությունն ու բառաշահանությունն արտահայտելու համար տվյալ օրինակի որոշ բառերում (Սարոյանը, գոգող, պիես) դերանուններին զուգահեռ (բացի՝ սլիսիսի) օդտադործվել է նաև դ հոդը:

Դերանվանական փոխարինող միավորներն ունակ են հանդես բերել արտահայտչական այլ գործառություններ, որոնց մասին խոսելը մեր նպատակից դուրս է, քանի տր բերված փաստարկներն էլ բավարար հիմք են տալիս պնդելու, որ նախընթաց անդամի դերանվանական փոխարինումների իմաստային-ոճական իրական արժեքները հիմնականում իմաստավորվում են առաջատային-հաղորդակցական ոլորտներում:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի ոճական կիրառություններն են դրսևորում նախընթաց անդամի գոյականական փոխարինումները:

Անվանական բառիմաստային խմբերի մեջ իր ուրույն տեղն ունի դոյական առումը, քանի որ այն ի վիճակի է նոր ու փոփոխված ձևով արտահայտել իմաստային այլ բառախմբերի բովանդակությունները: Այդ յուրահատկության դրսևորման համար, անշուշտ, տեքստում անհրաժեշտաբար հանդես են գալիս առնվազն մեկից ավելի լեզվական տարրեր, որոնց միջև փոխարինման կամ կրկնման միջոցով հաստատվում է երկկողմանի համագործակցություն: Այսինքն՝ իմաստային կապ է ստեղծվում նախընթաց անդամի ու նրան փոխարինման եկած լեզվական այս կամ այն միավորի միջև: Եվ հատկանշական է, որ այդ կապը չի սահմանափակվում միայն տրվյալ միավորներով: Այն հետևողականորեն նպաստում է մի ասույթից կամ դերասույթից մյուսին անցնելու ներքին ընթացքին: Փոխարինվող կամ կրկնվող տարրերի հետագա վերլուծատարածումներն իրենց հետ բերում են այնպիսի նրբերանգներ, որոնք տեքստից դուրս չեն կարող ընկալվել:

Տեքստային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախընթաց անդամի գոյականական փոխարինումները արտահայտում են մի շարք տար-

բեր իմաստներ: Առանձին հետաքրքրություն են առաջացնում տեքստային այդ նույն փոխարինումների նաև ռճական արժեքները, որոնց հիմնական զրսեորումների վրա հարկ է կանգ առնել: Այս իմաստով քննության ենթարկենք տեքստային հետևյալ հատվածը.

— Հիմա էս դելանով ու էս շորերով, Ալմաստ օան, ևս ու դու Թիֆլիսում նստած լինեինք ձեր դռանը՝ Տափի թաղում, ախ, ինչքան կծիծաղեին մեր թաղի աղջիկները:

— Էլ չենք տեսնի ոչ Թիֆլիսը և ոչ Սոլուկը, Սալոմե ջան: Մի՞տղ է գալիս, որ կիրակիները գնում էինք խնվումը յուրթի (գնդակ) էինք խաղում: Ուր է էն օրերը... Կեկելի աղջիկը՝ Սոփոն հիշում ես, Սալոմե, ինչ լավ էր խաղում էն ծամ կտրածը:

Հայրենիքի ճիշդությունները չավալի տպավորություն ունեցան երկու գերիների վրա ևս (ԲՀ):

Տվյալ դեպքում ուշադրամն այն է, որ նախընթաց անդամի ընդգծված գոյականական փոխարինումը (հիշողություններ) ոչ միայն իմաստային կապ է հաստատում բերված գերասույթի տարբեր մասերի միջև, այլև լեզվական հատկապես այդ միավորի միջոցով է, որ, իր մեջ խտացնելով իրենի նախորդող ամբողջ հատվածի հիմնական իմաստը, այդպիսի ներազդումով է ամբողջացնում հաղորդակցման մասնակիցների մոտ տեղականորեն կուտակված ներքին ապրումների իմաստային այդքան ճնշիչ մթնոլորտ: Այստեղ էական է այն, որ գոյականական այս փոխարինման ռճական-արտահայտչական այդպիսի արժեքի զրսեորումը պայմանավորված չէ միայն տվյալ բառով ու տվյալ նախադասությամբ: Քանի որ սրանց մեկուսի վերլուծությունը չի կարող լիարժեք կերպով բացահայտել լեզվական նշված միավորի հուզարտահայտչական այն բոլոր հնարավորությունները, որոնք կարող են դրսևորվել հիմնականում միայն տեքստային սլայմաններում: Այլապես ինչպես կարելի է առանձնացնել ճիշդություններ գոյականական փոխարինման իմաստային-ռճական նշված արժեքը, եթե տվյալ փոխարինումը չդիտարկենք իր ծավալուն նախընթաց անդամի հետ մի միասնության մեջ, որտեղ զրուցակիցները, ստրկական պայմաններին ելնելով, իրենց մղվածանքը ցանկանում են գեթ մի պահ փարատել հայրենիքի հիշողություններով ու մտաբերումներով: Այդ կերպ նրանք զգացական ներքին ալեկոծումով վերապրում են անցյալի պահերը և որոշակի հող նախասյուրհաստում վերջին ասույթում հանդես եկող ընդգծված խոսքային տարրին հաղորդելու հուզարտահայտչական առանձնակի արժեք: Իհարկե, չպետք է անտեսել նաև զգացական այդ արժեքի ձևավորման հարցում ինչպես հոգնակի թվի, այնպես էլ տվյալ ասույթում գործառնող հայրենիք, ցավալի, գեղեցիկ խոսքային միավորների բերած նպաստները:

Նախընթաց անդամի գոյականական փոխարինումներն իմաստային-ռճական աչքի ընկնող հնարավորություններ են ընձեռում հատկապես ամբողջական տեքստերի սեղմ, արտահայտիչ ու ավարտուն հորինվածքի ձևավորման համար:

Այս առումով հատկանշական է «Օջախի ծուխը» պատմվածքի գոյականական ոչ թե առանձին փոխարինումների, այլ սրանց ստեղծած միասնական ենթահամակարգի գործուն ու նպատակային մասնակցությունը պատմվածքում տեղի ունեցող բոլոր հիմնական իրադարձություններին՝ լավագույնս ու ամփոփ ներկայացնելով գործառական այն նրբին ձևերը, որոնք համապատասխան իրադրություններում օժտված են իմաստային ու ռճական նկատելի արժեքներով: Այսպես, նշված տեքստ-պատմվածքի բովանդակությունն ամբողջապես հենվում է հետևյալ նախընթաց անդամների, որոնք կազմում են տվյալ տեքստի իմաստային առանցքը, ու նրանց գոյականական փոխարինումների վրա. օջախի ծուխ, Վարու ամի, զավակ, արուզավակ, ժառանգ, տուն, տուն ու տեղ, ծուխ, ընտանիք, երեխա, Մնացական, տղա, օջախ, որդի, աղջիկ, երիտասարդ, մարդ, բարեկամ, դրացի,

հալը, ամուսին, որոնք իրենց հերթին առնչակցվում են տարբեր ծավալում-ներին հետ:

Այս փոխարինումներից յուրաքանչյուրն իմաստային որևէ հերանգով միահյուսվելով ընդհանուր բովանդակությանը՝ միաժամանակ, որպես ընտրողի խոսքային միավոր, տեքստային համապատասխան միջավայրում օժտվում է արտահայտչական որոշակի նշանակությամբ՝ այն դարձնելով նպատակային, սեղմ, չխճողված ու հուզական:

Դրանում համոզվելու համար աեքստ-պատմվածքի քսան գերասույթներից առանձնացնենք թեկուզ հետևյալը.

Վարոս ամին Լրեխան մկրտեց, անունը դրեց Մնացական: 1

Սակայն դուրսում սկսեց ծայր առնել բամբասանքն ու խժրժանքը Վարոս ամու կնոջ մասին:

Բամբաստենքը ճամփա էին կտրել և հասել նրա աղանջին: Շատ աղավի էր նա, շատ տիրել և մանավանդ խիստ դայրացել, որ իր կնոջ անարատ պատիվն այնպես անարդար կերպով անարդու էին շարաթույն լեղունները՝ անտեղի, լիբր զրպարտանքներով:

Մի առավոտ Վարոս ամին եկավ ինձ մոտ:

— Դու, դիտնակ մարդ ես,—դիմեց ինձ,—դրքերդ մեկ բաց՝ տեսնենք: Տեսնենք թե՛ իմ տարիքի տեր մարդուց ծնած օխթամսեկան Լրեխան կարո՞ղ է ապրել:

— Իհարկե, կարող է ապրել: Ոչ մի կասկած,—հանդստացրի նրան:

— Նորից ասում եմ, իմ տարիքի տեր մարդուց, կուղեմ ասել, ինձնից ծնած Լրեխան,— և շեշտեց «ինձնից» բառը:

Այդքերիս մեջ կարդալով իմ զարմանքը, Վարոս ամին հուզված ասաց.

— Դու չես լսել, որ գեղը վրաս հաշում է, թե տղան ինձնից չէ, թե՛ հետը բերովի կ'ես չգիտենալ ձևացրի:

— Հա, գեղը որ կա՝ անաստված, անխիղճ, անամոթ բան է...—Եվ քիչ հետո հարեց,—բայց ամենագետ ասածուն հայտնի է, որ երեխան իմս է: Կնիկս անարատ է, կնիկս անմեղ է թե ասածու, թե իմ առաջ:

— Դարդակ խոսքերին ուշք մի դարձրու, Վարոս ամի,— ասացի ես,— միայն երեխային լավ պահիր, լավ կերակրիր: Յոթնամսականներին ավելի լավ պիտի խնամել:

Այստեղ Վարոս ամի, երեխա և կին նախընթաց անդամները տասնչորս անգամ կրկնվել կամ փոխարինվել են այլ գոյականների: Ըստ որում ընդգծված բոլոր գործառնություններն էլ, օժտված լինելով իմաստային տարբեր կապերով, դրսևորում են ոճական-արտահայտչական որոշակի նշանակություններ, որոնք գերազանցապես բխում են տեքստային բուն պայմաններից և, բնականաբար, պայմանավորվում նրանցով: Օրինակ՝ տվյալ հատվածում տեղ գտած «Վարոս ամին երեխան մկրտեց, անունը դրեց Մնացական» ասույթը դեռևս լիարժեք հիմք չի տալիս գնահատելու Մնացական գոյականական փոխարինման իմաստային-ոճական արժեքը: Այն ի հայտ բերելու համար հետամուտ լինենք տեքստ-պատմվածքի հետևյալ հիմնական իրադարձություններին:

Վարոս ամին ողբերգություն է ապրում արու զավակ շունենալու համար: Նրան (չնայած երկու աղջիկ ունի) խիստ անհանգստացնում է օջախի ծուխը շարունակելու մտատանջությունը: Կնոջ մահանալուց հետո նա՝ կըրկին ամուսնանում է և ունենում արու զավակ, որին կոչում է Մնացական:

Բերված իրադարձությունների ֆոնի վրա արդեն ամբողջապես ընկալելի է դառնում լեզվական տվյալ միավորի, իբրև օջախի ծուխը շարունակողի, ճիշտ ընտրությունն ու նրա իմաստային-ոճական բուն արժեքը: Իմաստային-ոճական այդպիսի գնահատմամբ լեզվական տվյալ միավորը ներդաշնակ կապի մեջ է մտնում տեքստ-պատմվածքում առանձնացված օջախի ծուխ նախընթաց անգամի հետևյալ գոյականական փոխարինումների հետ. զավակ, արու զավակ, ժառանգ, տուն, տուն ու տեղ, ծուխ, ընտանիք, երեխա, տղա, օջախ, ողբի, երիտասարդ, որոնք այլ բառերի հետ միասին կազմում են գոյականական փոխարինումների ենթահամակարգ:

Ընդ որում սրա բաղադրիչներից յուրաքանչյուրը գործառական իր միջավայրում նստակալներին դրսևորում է իմաստային-ոճական յուրատեսակ պատճառաբանվածություն:

Վերցնենք նույն դերասույթի շարահյուսական վերջին կառույցը՝ «Յոթնամյակաբեհեթի» ավելի լավ պիտի խնամել, որը դարձյալ ամբողջական պատկերացում կազմել չի տալիս յոթնամյակաբեհեթ ընդգծված գոյական փոխարինման ոչ տվյալ գործառական իմաստի և ոչ նրա կոնկրետ ոճական արժեքի մասին: Սակայն նույն դերասույթի մյուս հատվածները տեղեկացնում են, որ Վարոս ամուսինը ամուսնանալուց հետո յոթամյականում է երեսան ունեցել ու առիթ է տվել «չարաթույն լեզուներին» անարգելությանարարտ կենդանի պատվին ու հոգեկան խռովքի մեջ գցել բարեպաշտ ամուսնուն:

Փաստորեն տեքստային բերված բոլոր իրադարձությունների միասնական դիտարկմամբ են ձևավորվում հոգնակիով դրված յոթամյակաբ գոյական փոխարինման ընդհանրացումը ու երկակացնող գործառական նոր ու որոշակի իմաստները, որոնցով պայմանավորվում է և տվյալ լեզվակառուցվածքի ոճական-արտահայտչական արժեքը:

Նախընթաց անդամի գոյական փոխարինումը, որ բնաձայնության հետևանքով առաջացնում է բաղաձայնների կուտակում, նպաստում է արտահայտչականության ուժեղացմանը: Օրինակ.

Ով շրխկացրեց իր ցուցամատով ու բթամատով: Եվ այդ շրխկացը մահացու փոթկացին: Եր տաքգլուխ մի ուսանողի ատրճանակից (ՊԱԵ):

Շրխկաց բայանուն փոխարինումը նույնությամբ կրկնելով իր նախընթաց անդամի (շրխկացրեց առաջին շորս բաղաձայն հնչյունները, ավելի ներգործուն է դարձնում խոսքի արտահայտչականությունը: Միևնույն բաղաձայնների այդպիսի ներդաշնակ կուտակման ոճական-արտահայտչական արժեքն առավել ակնառու է դառնում, երբ նախընթացն ու փոխարինողը, անկախ տեքստային պայմաններից, արտահայտում են, ինչպես տեսնում ենք, նշանակության ընդհանրություն. միաժամանակ ապահովելով ոչ միայն ներասույթային առանձին կառույցների իմաստային կապ, այլև տվյալ միավորների գեղագիտական կարողություն:

Ոճական-գեղարվեստական նոր բովանդակություն են ձեռք բերում նախընթաց անդամի դոյականական այն փոխարինումները, որոնք տեքստային գործառությունից դուրս (այսինքն՝ համակարգի սահմաններում) շունեն նշանակային ընդհանրություն: Օրինակ.

Մի երկու օր էլ անց առավոտյան քաղաքում բոթ ընկավ, թե Օլիկն իրեն սպանել է: Փվում էր, որ բախտից դառնապես հարվածված ծերունին չէր ըմբռնում անավար իրականությունը:

Փեսան չչնչալով ասում էր ինձ.

— Դու Օլիկի ընկերն ես, կգիտենաս նրա հիմարությունն պատճառը... Ախր ինչու էդ անասավածությունը գործեց (ԱԻՀ):

Բերված օրինակի առաջին ասույթում գործառված իրեն սպանել է նախընթաց անդամը տվյալ գերասույթի մյուս ասույթներում հաջորդաբար փոխարինվել է անավար իրականություն, հիմարություն, անասավածություն գոյականական տարրերի, որոնք բերված տեքստային հատվածից դուրս չեն կարող միմյանց հետ համագործակցվել իմաստային ընդհանրության տեսանկյունով: Մինչդեռ տեքստային ներհուն միջավայրն ի վիճակի է բացահայտել նոր օժտվածություններ, արտահայտչական նոր հնարավորություններ, որոնք սերտորեն առնչակցվում են նաև տեքստ կազմողի ջրահի գոր-

ծառնության հարցում անհատական ակտիվ վերաբերմունքի արտահայտման հետ⁴։

Նախընթաց անդամի ու նրա ծավալումների փոխհարաբերությունները, փաստորեն, շարժման մեջ են դնում լեզվական միջոցների նշանակային ու ոճական-արտահայտչական ներուժակ կարողությունները, կյանքի կոչում նոր միավորներ, հոմանիշների նոր շարք, խոսքը դարձնում թարմ, ազդեցիկ ու շփոթված։

Ի՞նչ ենք այլ օրինակ։

Մեսրոպը չէր կարողանում շարունակել իր խոսքը։ Աճավոր լուսնյակն էր տիրում դասարանում։ Թվում էր, թե բոլորս լուռ ու քարացած պիտի մնանք (ՀՔՄ)։

Չկարողանալ շարունակել խոսքը նախընթաց անդամին փոխարինման եկած աճավոր լուսնյակն արտահայտությունն այստեղ ոչ միայն սաստկացնում է իր նախընթացի դրսևորած իմաստը, այլև տվյալ զուգորդմամբ ավելի է ընդգծում ու նոր թափ հաղորդում խոսքի արտահայտչական կարողությունը, որն ի սպաս է դրվում գեղարվեստական խոսքի կատարելագործման ընթացքին։

Փոխարինող կապակցության մեջ իր արտահայտչական որոշակի կշիռն ունի նաև աճավոր բաղադրիչը։ Հեղինակի նկարագրած լուսնյակն սովորական լուսնյակն չէ, այլապես նա կօգտագործեր փայլ լուսնյակ, հեղիշ լուսնյակ, խորհրդավոր լուսնյակ և նման այլ փոխարինումներ, սակայն համատեքստային տվյալ իրադարձությունների պայմաններում, թե ժողովուրդ է ֆիզիկական բնաջնջման ինչպիսի սարսափելի սպառնալիքի տակ էր, նույնիսկ նախընտրում է հենց աճավոր լուսնյակն՝ կապակցությունը, որը ճիշտ արտացոլելով ստեղծված իրավիճակը, ցույց է տալիս նաև ուսուցչի հաղորդած տեղեկության սահմանելի ազդեցությունը բոլոր սաների վրա։ Գոյականական փոխարինման գործառական այդպիսի նրբերանգում, անտարակույս, պայմանավորվում է լեզվական տվյալ միավորի գեղարվեստական՝ ոճական արտահայտությունը, որը նյութականացվում է ձևավորվում է համատեքստային տարբեր գործոնների առարկայական թելադրանքով։

Նախընթաց անդամի գոյականական փոխարինումը ծառայում է նաև խոսքի սեղմությանն ու ամփոփ դրսևորմանը։ Օրինակ.

— Դայց նրա վանքի կոնվեր կազմակերպված պայքար էր, — հիշեցրեց Քեռին։ Երեսուճ հայդուկներ կոմի են երեք հազար զորքի դեմ, և նրանց ձեռքին եղել է ընդամենը երեսուճ լոթ բերդանկի։

Այդ ճարգը նորից դրդեց իզդիրցուն, և նա սկսեց երիտասարդ սպայի հետ ռուսերեն խոսել (ԽԴԲ)։

Բերված գերասույթի առաջին հատվածն ամբողջությամբ հանգես է դալիս իբրև նախընթաց անդամ, որը հաջորդ հատվածում փոխարինվում է ընդհանրական իմաստ արտահայտող ճարգը գոյականով, իսկ վերջինիս որոշակիացումն ընդգծվում է այդ ցուցականի անմիջական ուղեկցությամբ։ Վերջին երկու միավորների գործառական պատճառաբանվածությունը չի սահմանափակվում միայն իմաստային դրսևորումներով։ Այն իր մեջ ներառում է նաև ոճական յուրահատկություններ, ընդգծված գոյական փոխարինումը (այդ վճռող տարրի մասնակցությամբ) իր ընդհանրականություն պարունակող իմաստով սեղմում, կենտրոնացնում է ամբողջ նախորդ հատվածը, խոսքի արտահայտումը, պատկերված իրադարձությունների հաջորդումը դարձնելով սահուն, ոչ նմանատիպ ու միօրինակ։

⁴ Ս. Մ. Մեկրյան. Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության. Երևան, 1984, էջ 70։

Գոյականական փոխարինումը դրսևորում է նաև եղանակավորման երանգ, որն ուղեկցվում է դրական կամ բացասական զգացականություն առաջացնող խոսքային հաղորդակցական առանձնակի միջոցներով:

Բերենք հետևյալ օրինակը:

Յկան Օսկանն ու հացահատիկ առնող գյուղերի վաճառականները...

Ոնց որ կարկտաբեր ամպ գոռար ու փուլ դար, Ուտանն էլ այնպես...

— Ձեններդ, Գյումրվա անոթիներ, ընկել եք գեղերը, փոր կպտտեցնեք, գեռ մարդու

էլ չեք հավանի...

Տո հագի հայնոյաղներ, դուք էն չեք, որ տասը գրվանքան փութի տեղ կհաշվեք, տարան հղեն ծանր կթաշեք, ոտներդ կշեռքի թար կշինեք, սառանի ձագեր ... (ԱԽՈՒ):

Տեքստային այս հատվածում Գյումրվա անոթիներ, հագի հայնոյաղներ, սառանի ձագեր գոյականական ընդգծված փոխարինումների շարքը տարբեր մասերի միջև նրբերանգային կապ հաստատելուն զուգընթաց, ցույց է տալիս նախընթաց անդամի՝ գյումրեցի վաճառականների նկատմամբ առաջացած լարված տրամադրվածությունը, որն էլ ազդակ է ծառայել հաղորդակցման մասնակիցների միջև ոչ դրական զգացական հարաբերությունների դարձացմանը:

Բացասական տվյալ զգացմունքի արտահայտման համար ընտրվել է տեքստային մթնոլորտն աստիճանաբար շիկացնող համապատասխան հոմանիշների խումբ: Խոսքային այդ միջոցները վերընթաց հետագծով դրսևորում են իրենց իմաստային-առական լայն հնարավորությունները, որոնց գեղարվեստական ուղղվածության արժեքն ավելի ակնառու է դառնում, երբ նրանք համահունչ են ընդհանուր տեքստային միջավայրին ու բովանդակությանը:

Նախընթաց անգամի գոյականական փոխարինումների գործառական նրբերանգներն ու նրանց առական-արտահայտչական նշանակությունները, ինչպես տեսնում ենք, բավական բազմազան են և բոլորի մասին հնարավոր չէ խոսել: Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ ինչպես մյուս, այնպես էլ գոյականական փոխարինումների գործառական նրբերանգների ու արտահայտչական արժեքների բուն էությունը գրսևորվում ու իմաստավորվում է ամենից առաջ տեքստային ոլորտներում:

Այժմ անդրադառնանք նախընթաց անդամի բայական փոխարինումների առական դրսևորմանը:

Բայը բառիմաստային այն առանձնակի խումբն է, որն աչքի է ընկնում քերականական ինքնատիպ ու տարբեր կարգերի առատությունով, և որ այս առավելությունը նրան հնարավորություն է տալիս տեքստում իր համար ապահովելու յուրահատուկ դիրք: Այդպիսի յուրահատուկ դիրքը, բնականաբար, նրան արտոնում է նաև իմաստային-առական գործառությունների ակնհայտ առավելություն՝ բառաքերականական մյուս դասերի նկատմամբ:

Այդ իմաստով քննության ենթարկենք տեքստային հետևյալ օրինակը.

Ահա գետնին երկաթած կամ բիլե տված պառկած են հայդուկները... Մեջքի վրա ածողահայի պես տառածվել է Սպաղանաց Մակարը: Մի հարված տվեց Գալի մեջքին, մի թեթև հարված Փետրա Մանուկի թիկունքին և լաճանցի Արթինի կողքից անցնելով, հոգնած շատ եկավ նրանց մեջտեղը...

Զուրն մեկնվել է Սպաղանաց Մակարի ոտքերի տակ... Իսկ իր ծնկներին հանգչում է Ալադին Միսակի գլուխը (ԽՂՈ):

Հարաբերական ինքնավարությամբ օժտված տեքստային տվյալ մեջբերումը կարելի է դիտել որպես մի գերասույթ, որի իմաստային, հորինվածքային ամբողջացման շարժընթացի ու արտահայտչական արժեքի դրսևորման հիմնական տոն տվողները նախընթաց անդամի բայական ծավալում-

ներն են: Մարահյուսական լրացնող ու մեկնաբանող այս կառույցներում տարածվել է, հոգնած շուտ եկավ, հաճախում է, մեկնվել է բայական փոխարինումների հոմանիշ շարքի համար, ինչպես նշել ենք, իբրև նախընթաց անդամ է հանդես եկել գերասույթի հենց սկզբում գործառնող երկարած, թիկն աված պառկած են բայախումբը: Բայական տվյալ փոխարինման այլ յուրահատկությունների մասին արդեն խոսվել է, սակայն այստեղ կարելի է, որ սլառկելու կամ հանգստանալու ընդհանրական հասկացությունն արտահայտվում է նշանակիչային տարբեր դրսևորումներով, ինչը հանգեցնում է խոսքի իմաստային-ոճական նրբերանգների հարուստ ու հաճելի բազմազանության:

Միասնական շղթայով տեքստային որոշակի տարածության վրա հաջորդարար կատարված բայական տվյալ փոխարինումներն իրենց նախընթաց անդամով արտահայտված ընդհանրական հասկացությունը ներդաշնակորեն մատուցում են ոչ մեկուսի նախադասության սահմաններում, այլ ամբողջ գերասույթում՝ այն էլ հավաստի գործողությամբ աչքի ընկնող սահմանական եղանակով դրված լեզվական հոմանիշ տարրերի միասնությամբ ու վերջիններիս գեղարվեստական արտահայտչական նեոունակ հնարավորությունների տեղին ու լիարժեք ցուցադրումով:

Տեքստի իմաստային-ոճական նշանակությունն ավելի ակնառու է դադնում, երբ նրա բաղադրիչ մասերն իրար հետ առնչակցվում են շրջասույթային հարաբերություններ առաջացնող կապերով: Օրինակ.

Նրանց հայացքները հանդիպեցին իրար: Աղչիկը շփոթվեց և հանդիմանարար ցած զցեց աչքերը: Զոր էր, մենություն, և դրանից աղչկա սիրտն սկսեց անհաշվառ զարկել...

— Սա ասացի, որ իմ անունը Յավրի է... — ու ժպտաց Յավրին և խորամանկորեն նայեց տևր Գեղեցիկի աղչկան:

— Ինձ էլ Հոփսիմեն են ասում, — ու կարմրալոյսեր, որ անցել էր նրա դեմքից, նարեց վրա տվեց, նարեց կարծե՞ց սկսեց վեր ու վար անել (ՍԱՄ):

Այս օրինակը դարձյալ կարելի է դիտել իբրև հարաբերական ինքնուրույնությամբ օժտված մի ամբողջական գերասույթ, որը, իր հերթին, շերտավորված է երեք միկրոփմաստային միավորների՝ ասույթների: Առաջին ասույթում իբրև նախընթաց անդամ հանդես եկող ռեպրտի սկսեց անհանգիստ զարկել՝ նախադասությունը գործառնում է հուզվել բայի փոխարեն: Երրորդ ասույթում այն փոխարինվում է կրկին նույն բայական իմաստն արտահայտող, սակայն արտաքին այլ ձևավորում ստացած ճկարմրությունը ներքին վրա տվեց՝ և ռեպրից կուրծքն սկսեց վեր ու վար անել՝ շրջասույթային նախադասություններով: Դա տեքստային ոչ հաճախ հանդիպող երկվություններից է, երբ և՛ նախընթաց անդամը, և՛ նրան փոխարինող տարրերը տեքստային տարբեր հատվածների միջև իմաստային կապակցվածությունը դրսևորում են շրջասույթամբ: Գեղարվեստական փոխակերպման այս հաջողված եղանակը խոսքը դարձնում է գեղեցիկ ու պատկերավոր, հուզիչ ու արտահայտչական: Դրան, անկասկած, նպաստում են փոխարինող նախադասություններում հանդես եկող վրա տվեց, սկսեց վեր ու վար անել ստորոգյալները, որոնք տվյալ դեպքում, արտահայտում են մի վիճակից մեկ այլ վիճակի անցման սկիզբ, ինչպես նաև համապատասխան հատկանիշով օժտված լինելու յուրահատկություն: Բայական այդպիսի գործառնական նրբերանգների դրսևորումը ձեռք է բերում գեղարվեստական ոճին հատուկ հուզական, արտահայտչական խոր ներգործման ուժ, որով մեկ անգամ ևս ընդգծվում են նրանց ներքին ու բազմազան հնարավորությունները:

Բերենք այլ օրինակ:

Կանգուն առ կանգուն թաղվելով հողում՝

Հասնեցին՞ դարձյալ,

Մեացին՞ կանգուն.

Անվերջ բնկնելով՝
 Վերաթեքեցինք.
 Մեռնելով անվերջ՝
 Գոյատեքինք... (ՊՍԵ):

Տեքստային այս հատվածում կարելի է որոշակիորեն առանձնացնել բայական փոխարինումների երկու ինքնատիպ շարք: Առաջին շարքը լրացնում են բազմելով, բնկնելով, մեռնելով, իսկ երկրորդ շարքը՝ հառնեցինք, մնացինք, վերաթեքեցինք, գոյատեքինք գուգահեռաբար դրսևորվող և իրենց հարաբերությունների հիմքում յուրատեսակ բացասման բացասում սահմանող լեզվական համանիշ միավորները: Ըստ որում առաջին շարքում տեղ գտած բնկնելով, մեռնելով բայական փոխարինումներն իրենց հիմքում ունեն բազմելով նախընթաց անդամը, իսկ երկրորդ շարքի մնացինք, վերաթեքեցինք, գոյատեքինք բայական ծավալումների համար իբրև նախընթաց անդամ է ծառայում հառնեցինք միավորը:

Եթե մի կողմ թողնենք այլ յուրահատկություններ և ուշադրությամբ հետևենք լեզվական նշված միջոցների ոճական-արտահայտչական դրսևորումներին, ապա ակնհայտ կդառնան տեքստային համեմատաբար այս փոքր հատվածում խոսքային տարրերի օգտագործման զանազան հնարքների միահյուսումներ:

Այսպես, գործառական տարբեր նրբերանգներով ձևավորված նախընթաց անդամների բայական ծավալումների առաջին և երկրորդ համանիշային շարքերը հակադրվում են միմյանց իրենց ներհակ իմաստներով՝ համատեքստային տվյալ միջավայրում ստեղծելով համանիշ ու հականիշ տարրերի գործառությունների իմաստային-ոճական անառարկելի համերաշխություն: Ըստ էության բայական բոլոր փոխարինումներն այստեղ օգտագործվել են անորոշ դերբայի գործիականով ու սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևով: Դրանցով իսկ, ուղեկցող գործողության ձև արտահայտելով ու անցյալ ժամանակակետում առանց տեականության հավաստի կերպով կատարված գործողություն ցույց տալով՝ բայական նշված անդամ ու դիմավոր ձևերը, իրենց առատություններ, ողորդել են ողջ հատվածը, ամբողջությամբ վերածել բացասման բացասումի գործողության ու այն դրել անկասելի շարժընթացի մեջ: Տեքստում լեզվական միջոցների այդպիսի շոայլ կիրառությունները վկայում են, թե որքան բազմազան են նախընթաց անդամի՝ հատկապես բայական փոխարինումների իմաստային-ոճական հնարավորությունները: Խոսքաշարային ծավալուն հատվածներում բառաքերականական տվյալ դասը, իր համապատասխան կարգերի ու դրանցով պայմանավորված ձևերի բազմազանությամբ, լայն հնարավորություններ է ստեղծում ինչպես իմաստային, այնպես էլ արտահայտչական միջոցների ու հնարքների նուրբ ու խելամիտ ընտրություն: Նման ընտրությունը, անտարակույս, տեքստային պայմաններում ղուղափցվում է տվյալ խոսքի մասին հատուկ նշված կարգերի ու ձևերի տեղին ու մտածված փոխանցումների հետ, որոնք հեղինակային հորինվածքի իմաստային ու արտահայտչական առումներով դարձնում են պատճառաբանված, նպատակասլաց, ճոխ ու հուզական:

Քննության ենթակա օրինակում իմաստային-ոճական զնահատելի արժեք են ներկայացնում նաև բայական փոխարինումների դիմային դրսևորումները, որոնք գործառվել են սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևի հոգնակի թվի առաջին դեմքի վերջավորությունով՝ առանց տվյալ դեմքի անձնական դերանվան: Այս վերջին հանգամանքն ամենևին չի նսեմացնում բերված հատվածի գեղարվեստական իմաստը: Ընդհանրապես, միայն դիմային վերջավորությամբ հանդես եկող առաջին դեմքի բայական նշված ծավալումները, որ արտահայտում են իրար հաջորդող գործողություններ, տվյալ դեպքում ավելի են խտացնում տեքստային այս հատ-

վածի դեղարվեստական հաղեցվածությունը, հաղորդում նրան իմաստային դրամական ու հուզականային հատուկ բովանդակություն:

Երականական ինքնատիպ ու տարբեր կարգերի առատությունը հավաստիորեն արտոնում է նախընթաց անդամի բայական փոխարինումների իմաստային-առական դործառությունների ակնհայտ առավելություն. որը տեքստային իրադրություններում առաջացնում է միևնույն դործողության անվանումը նույնականացնող հոմանիշային շարքի, շրջաստության, բացասման բացասումի, հոմանիշների ու հակահիշների ներդաշնակություն, դիմավոր և անդամ ձևերի փոխդործության ու մի շարք այլ հարաբերություններ, որոնք նրբորեն զուգակցվում են տվյալ խոսքի մասին հատուկ նշված կարգերի ու տարբեր ժամանակաձևերի տեղին ու մտածված փոխանցումների հետ արդյունքում ի հայտ բերելով բայական փոխարինումների ոչ միայն իմաստային, այլև տեքստի ձևավորման համար ոչ սովորական կարևորություն ներկայացնող առական-արտահայտչական արժեքներ:

ՀԱՄԱՐՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԻՀ—Ավ. Իսահակյան. Հոր անձը. Երկրի լիզում, հ. 3; Երևան, 1975:
 ԱԻՈԻ—Ավ. Իսահակյան. Ուստա Կարո. Երկրի ժողովածու, հ. 4, Երևան, 1975:
 ԱԻԾ—Ավ. Իսահակյան. Ոչախի ծուխ. Երկրի ժողովածու, հ. 4:
 ԽԴԻ—Խ. Դաշտենց. Ռանչարների կանչ. Երևան, 1984:
 ՀՔՀ—Հր. Քոչար. Հնձվորի սերը. Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1975:
 ՀՔՄ—Հր. Քոչար. Մայրենի լիզում. Ընտիր երկեր, հ. 1:
 ՊՍԵ—Պ. Սևակ. Եվ այլ մի՝ Մաշտոց անուն. Երկրի ժողովածու, հ. 4, Երևան, 1973:
 ՄԱԺ—Ս. Այվազյան. Ժակատագիրն հայոց. Երևան, 1967:
 ՍՀ—«Սովետական Հայաստան» (Քերթ), 1988, № 244:
 ՎԴՍ—Վ. Դավթյան. Սարսան անվերջ լ. «Գարուն» (ամսագիր), 1988, № 6:
 ԲՀ—Բաքի. Հարև. Երկրի ժողովածու, հ. 2, Երևան, 1983:

СЕМАНТИКО-СТИЛИСТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ РАЗВЕРТЫВАНИЯ АНТЕЦЕДЕНТА

Доктор. филол. наук Б. К. КАЗАРЯН

Резюме

Рассмотренные части речи своими семантико-функциональными полноценными проявлениями различаются только в развернутых текстуально-коммуникативных сферах. А экспрессивно-стилистическая ценность этих единиц, безусловно, тесно связана с их определенными употреблениями. Следовательно, как реальные значения языковых единиц проявляются, в основном, в текстовых ситуациях, так и собственно экспрессивно-стилистические значимости выявляются в соответствующих текстовых ситуациях. И вне этих определенных текстовых ситуаций трудно представить как семантические, так и эмоционально-экспрессивные оттенки функциональных вариантов языково-коммуникативных единиц.